


Բ Լ Բ Ո Յ Ե Կ Ե Ն

ՍԿՕՒՆԻՆԻ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԻՀԵՆՏԻՍԵԱՆ

1845 — ՌՄՂԲ

170
U481 P1


Բ Ե Ր Ո Յ Ը Կ Ը Ն

ՍԿՕՒՄՆԻՔ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ Վ. Ս.

ՀՐԱՄԱՆԵՒ

ԱՄԵՆԱԳԱՏԻ ՍՐԲԱԶԱՆ ԳԱՏՐԻԱՐՔԻ
ՏԵԱՌՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՐՈՅ ԱՌԱՔԵԼԱՇԱԻՂ
ԱՐՔ ԵԳԻՍԿՈԳՈՍԻ



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ

1845 == ՌՄՂԲ





ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ն Ե Ր Ը Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԲԱՐՈՅԱԿԱՆԸ՝ մեր պարտուցը գիտու-
թիւնն է :

Բարոյականը մեզի կըտրվեցնէ մեր ինչո՞ւ հա-
մար ստեղծուած ըլլայնիս , մեր նպատակին ինչ
ըլլալը , ան նպատակին հասնելու համար մեզի ինչ
օրէնք դրված ըլլալը , ան օրէնքներուն զանցառու-
թէնէն մեզի ինչ ըլլալը , բարին ու չարը ինչպէս
ճանչնայնիս , վերջապէս մեր նպատակին հասնելու
եղանակը : Ասոնց բոլորն ալ մեզի բարոյականը կը
ստրվեցնէ :

Բարոյականին սկզբունքները ու կանոնները , 'ի
յաւխտենից հաստատուած են , և յաւխտեան ա-
նանկ անխախտ պիտի մնան . նայինք ան սկզբունք-
ները որոնք են :

'Նախ' ॥ Մարդը ինքերմէ չէ ստեղծուած , ա-
րարիչ մը ունի , անկէց ստեղծուած է , ու անոր
կամքէն կախված է ॥ :

Երկրորդ՝ ॥ Մարդը աս աշխարհիս վերայ մինակ չի կենար , իրեն նմաններուն հետ կրնկերանայ , ընկերական վիճակ մը ունի ॥ . ուրեմն՝ Մարդը իր բեր տեսակ պարտք ունի , մէկը՝ աստուծոյ . մէկալը՝ իր նմաններուն , ու երրորդն ալ՝ իր անձին . ուրոնք անթերի կատարելու համար՝ նախ անոնց ամ մէն մէկին ինչ ըլլալը՝ պէտք է որ ազէկ մը սոր վինք հասկընանք :

Բարոյականին կանոնները չի գիտնալը՝ աններելի է . հոս սխալիլը՝ ուրիշ բանի մէջ սխալելու չի նմանիր . բարոյականին կանոնները՝ մեր նպատակին հասնելու միջոցներն են , անոնց մէջ սխալիլը՝ մեղի նպատակներնուս ետ կեցընել է :

ԳՒՌԻԻ Ա.

ԳՈՅՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

ԵՐԿՈՒ գլխաւոր ճշմարտութիւն կան՝ որ բարոյականին պարտքերը անոնց վրայ հաստատուած են . այսինքն՝ մէկ մը , արարիչ մը ըլլալը . մէկ մալ՝ մեր անմահ հոգի ունենալը :

Արարիչ մը ըլլալուն ապացոյցները (իսպաթ) շատ են . աս աշխարհիս մէջ ամմէն բան աստուծոյ էութիւնը կիմացնէ : Երկինքին մէջ այսչափ անթիւ մարմինները՝ ո՞վ արարչագործեց , ինքիւրեն նուն մի՞ եղան . ո՞վ ամմէն բանը չափեց կարգի դրաւ , ո՞վ հաւուն թուչել սորվեցուց , ձուկերուն

լողալ , ու չորքրօտանիներուն քալել . ո՞վ աս աչ-
խարհը զարդարեց սոււնկերով ու անասուններով .
ո՞վ ըսաւ արեգակին լուսաւոր ըլլալ . ո՞վ ամառը՝
ձմեռը՝ եղանակները սահմանեց :

Արկիւնքն է՛լ կամ վար իջ՛ր , աչքդ ո՛ւր պը-
տրոցընես , զարմանալի էակներ կըտեսնես . ամմէն
բան քեզի կուգայ կըսէ՝ = Այ ալ այնչափ անթիւ
էակներուն մէջ՝ մէկ էակ մըն եմ = . ամմէն բան
չափուած է . ամմէն ըլլալիք նախասահմանուած են :

Ո՞վ է աս նախասահմանութեան տէրը , աս
էակներուն ամմէնը մէկ դի թո՞ղ կենան . դուն քե-
զի նայէ՛ , ո՞վ քեզի ստեղծեց . զէրէ դուն ալ գի
տես՝ ատեն մը կար , որ չիկայիր , ու դուն ինքը
զինքդ չէ՛ս կրնար ստեղծել . ուրեմն հարցո՛ւր դուն
քեզի՝ ո՞վ իս ստեղծեց . աստուծոյ էութիւնը չէ՛
թէ միայն տեսածդ՝ լսածդ՝ շօշափածդ՝ քեզի խա-
պար կուտան , հապա քու ներսիդիդ ալ անիկա
քեզի կիմացընէ . ցուցո՛ւր ինծի անանկ մէկ աշխարհք
մը , անանկ մէկ տեղ մը՝ որ աստուած չի ճանչնան .
ամմէն տեղ արարիչ մը կը խոստովանին :

Աստուած ինքնիրեն կայ , թէ որ ինքնիրեն կայ
նէ՛ սկիզբ ու վերջ չունի . անկարելի է որ մէկէն
աւելի ըլլա , հիչ մէկէ մը կախեալ չէ՛ , ամենիմաստ
է , ամենակարող է , ամենարդար է , ամենագէտ է ,
անհուն է , ամենաբարի է , վերջապէս աստուած
ամենակատարեալ է :

Ամենակատարեալ ըլլալը երկու բանով կըլլայ՝
գիտնալով ու կարենալով , աստուած ամմէն բան
գիտէ , ու ամմէն բանի կարող է :

ԱՆՄԱՀՈՒԹՒՒՆ ՀՈԳԻՈՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆԿ ԵՐԿՐՈՐԴ հիմը՝ մարդուս անմահ հոգի ունենալն է :

Աս աշխարհքիս մէջ շատ էակներ կան ըսինք , մարդն ալ անոնց մէջ ուրիշ էակ մըն է , բայց մարդը անոնց հիջ մէկուն չի նմանիր :

Անասունները կրճնանին , կրմեծնան , կրմեռնին , ոչինչ ըլլալու համար . միայն մարդն է որ մեռնելէն ետեւ ոչինչ չըլլար , կանմահանայ :

Ամէն աշխարհք անմահութեան կրհաւատան . մարդիկ մեռնելու ատեննին , իրենց անունը ոչընչութեան խառնըվիլը ամենեւին չեն կրնար քաշել , ինքը զինքնին անմահ ընել կուզեն :

Ուրեմն ինչո՞ւ համար ամէն մարդուն սրտին մէջ աս անմահութեան սէրը կայ , աստուած կը խաբէ՞ մի . թէ որ անմահութիւն չի կար նէ , ինչո՞ւ համար անմահութեան տեսչը ներսերնիս պիտի դնէր , ինչո՞ւ անմահութիւնը սիրել պիտի սորվեցընէր :

Ամէն էակ , ամէն անասուն ուզածը ձեռք անցընելէն ետեւ գոհ է . բայց մարդը ինչո՞ւ բռնաւ գոհ չի կրնար ըլլալ . իր սիրտը աշխարհքէն մէծ է , ինչ հաճոյք , ինչ երջանկութիւն ալ ձեռք անցընէ նէ՞ թէ որ աս աշխարհքիս մէջն է՝ կէնէ գոհ չի կրնար ըլլալ . զէրէ երջանկութիւնը հոս չափուած է . մարդուն վնտըռած երջանկութիւնը՝ անտահման է , ուրեմն իր վնտըռած անտահման եր

Չանկու-թիւնը ուրիշ տեղ մը իրեն պատրաստուիլած է :
 Ատուած արդար է ըսինք , ինչո՞ւ անանկ է նե՛՛
 բարեգործ մարդիկ երջանկու-թեան չե՛ն հասնիր . ու
 չարագործ մարդիկ չե՛ն պատժուիլը : Թէ որ արդարու-
 թիւն մը կայ տէ՛ աս աշխարհիս մէջը չէ՛ նե՛՛ ՚ի հարկէ
 ուրիշ աշխարհի մը մէջ է , ուրեմն ուրիշ աշխարհ մը
 կայ , ու մեր նպատակն ալ հոն է . մեր փնտրուածը եր-
 ջանկու-թիւն է . ուրեմն մեր նպատակն ալ անսահման
 երջանկու-թիւնն է , այսինքն՝ ատուած է :

ԳՒՈՒԽ Գ .

Ա Ռ Ա Ք Ի Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ի Մ Ա Յ՝ նայինք ինչ կերպիւ ան երջանկու-
 թեանը կրնանք հասնիլ :

Սեզի բնական լոյս մը տրուած է , որով ար-
 դարու-թիւնը ու անիրաւու-թիւնը կը ճանչնանք .
 բարին ընելու ու չարէն փախչելու կը ջանանք . բայց
 մէկը բարի՛ մէկալը չար ըսելու համար , պէտք է որ
 կանոն մը ունենանք . ատ կանոնը մեր վախճանն
 է , մեր նպատակն է . պէտք է որ ամմէն ըրածնիս
 նպատակներնուս հասնելու համար ըլլա , ուրեմն
 մեզի առաջնորդ մեր ատ բնական լոյսն է :

Ատ բնական լոյսը ամմէն մարդու քով կայ ,
 ատոր խղճմտանք կսենք . ատով թէ որ ամմէն մարդ
 բարին ու չարը ճանչնալու կարողութիւն կունենայ
 տէ՛՛ մէկը չընէ , ու մէկալէն չի փախչի նէ , յան-

ցաւոր է . ատիկայ խղճմտանքը խապար կուտայ . նայէ՛ կայէն ի՛նչպէս իր յանցանքը գիտցաւ . նայէ՛ ի՛նչպէս մարդասպան մը իր խղճմտանքէն տանջը վերով երեւրեալ տատանեալ՝ կը պրտարտի . բնաւ հանգստութիւն չունի . ամմէն խղճմտանք առաքինութիւնը կը գովէ . մոլութիւնը վար կը դարնէ , թէ՛ իր քով տեսնայ , թէ՛ ուրիշին , մէկուն վարձք կը խոտտանայ , մէկալին պատիժ :

Մարդկային ընկերութիւնն ալ օրէնքներ սահմանած է , կանոններ դրած է , առաքինութեան վարձք , ու մոլութեան պատիժ տալու :

Մարդկանց մէջ սահմանված այս դատաստանը , ուրիշ ահագին դատաստան մը ըլլալիքը կիմացընէ . հոն աստուածային արդարութիւնը՝ ամմէն բան իր կշռէն պիտի անցընէ . ուրեմն երջանկութեան հասնելու համար , պէտք է որ առաքինի ըլլալու ջանանք ու մոլութենէն փախչինք :

Գ Լ Ո Ւ Խ Գ .

Ա Ս Տ Ո Ւ Ա Ճ Ս Ի Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՌԱՔԻՆԻ ըլլալու համար , նախ մեր պարտքերը կատարել պէտք է . մեր առջի պարտքերը աստուծոյ էր ըսինք , աս պարտքերը գտնալը դժար չէ . թէ որ մենք մեզի հարցունենք՝ թէ աստուած ո՞վ է , մենք ո՞վ ենք , անանկ՝ դիւրաւ կը գտնանք :

Սէնք ՚ի բնէ անսահման փափաք մը ունինք , բայց անիկա լեցընելու կարողութիւն չունինք իսկ

որովհետև աստուած ամենարդար է , պէտք է որ աստ փափաքը լեցրնելու բան մը հնարած ըլլայ . կը նայիմ որ իրեն չափ՝ սահման ուրիշ բան մը չի կրնար ըլլար . ուրեմն իմ փափաքս լեցրնողը ինքն է :

Ուստի նախ՝ պէտք է որ իմ անյագ իմացակա նութիւնս գոհ ընելու համար , միշտ իրեն անսահ մանութեանը վրայ մտմտամ , միշտ իրեն մեծու թիւնները միտքէս անցրնեմ , միշտ իրեն ամէ նագէտ ըլլալը յիշատակեմ միտքիս մէջ :

Նմանապէս՝ իմ անսահման կամքս լեցրնելու համար , պէտք է որ ամմէն ըրածս՝ ամմէն փափաք ներս իր անսահմանութիւնը մտածելովս ըլլա . զէրէ երջանկութեան աղբիւրը միայն ինքն է , անսահ ման երջանկութիւնը ինքն է :

Երկրորդ՝ ինքրզինքս կը սիրեմ , բայց՝ սիրելուս մէջ կատարելութիւն կը փնտրուեմ . կատարելութիւնը միայն աստուծոյ քով կրնամ գտնալ . ուրեմն՝ պէտք է որ աստուած սիրեմ , ինծմէն աւելի սիրեմ , զէրէ իմ փնտրուածս իմ անձս չէ՛ , ան է :

Երրորդ՝ միշտ աս կատարեալ էակը միտքիս մէջ բռնելով՝ ու ուրիշ բաներուն անկատարութեանը վրայ մտածելով , պէտք է որ ուրիշ ունայն բաները չը սիրեմ , միայն աստուած սիրեմ :

Չորրորդ՝ միշտ իրեն անսահման կարողութիւնը , ու արդարութիւնը միտքս բերելով , պէտք է որ իրեն հնազանդիմ , զինքը պատուեմ , վասն զի ամմէն բան և ամմէն արարած իր կամքէն կախված են , ինչ որ ուղէ նէ՝ ան կրնէ . իրեն չի հնազանդողները կը պատժէ , ու իրեն կամքը կատարողները կը վարձատրէ :

Նինգերորդ՝ որովհետև աստուած ամենակա

րող է , ամմէն բան անոր ձեռքն է , անոր համար պէտք է որ զինքը միշտ օգնութեան կոչեմ , աղօթք ընեմ որ ինծմէ չարը դարձնէ , ու չարը եկած ժամանակն ալ անոր դիմանալու համար ինծի զօրութիւն տայ :

Վեցերորդ՝ որովհետև իմ ամմէն՝ փափաքս կատարելութեան հասնիլ է , ուրեմն անսահման կատարելութեան հասնելու համար , պէտք է որ ես ալ կատարեալ ըլլալու ջանամ . ուստի պէտք է որ աս կատարելութեան՝ այսինքն , աստուծոյ նմանելու ջանամ : Աս կատարելութեանը ինչպէս կրնամ նմանիլ , թէ որ մեր խելքովը բոլորովին ատ չենք կրնար գիտնալ նէ . (բոլորովին կրեսմ՝ զէրէ աստուծոյ մեզի տուած բնական լոյսովը բարին ու չարը կը ճանչնանք) . բարին մեզ կատարելութեան կը մօտեցնէ , ու չարը անկէ կը հեռացնէ , ուստի ըսել է որ ատ բնական լոյսը մեզի կատարելութիւնը կիմացնէ :

Ասկէ 'ի զատ աստուած իր ընտրելոց ձեռքովը , մեզի իր կամքը գիտցուցեր է . անոր նմանիլ ու զենք նէ՝ անոր կամքը կատարենք պիտի . վերջապէս մեր աստուծոյ ունեցած պարտքերնիս՝ աս չորս բանն են . սէր , հնազանդութիւն , պատիւ , ու պաշտօն :

Պաշտելը չէ՛ թէ միայն մեր ներսէն ըլլալու է , հապա նաև դուրսի նշաններով . ընտիր որ միտքերնուս անցածը բերնով ու զգայարանքներովնիս կիմացունենք նէ , անանկ ալ մէկ բնական բան մըն է դրսի նշաններով հաւատալնիս՝ պաշտելնիս ցուցունել . ատ ցուցունելը ամմէն տեղ ժողովով կրլայ . ինչ կրօնք կրլայ՝ ըլլա՛ , ընտիր որ աստուծոյ չի հաւատացող մարդ չի կրնար ըլլար նէ , անանկ ալ տեղ չի կայ որ աստուած պաշտելը ժողովով չըլլա :

Գ Լ ՈՒ Խ Ե .

ՄԵԶԻ ՆՄԱՆՆԵՐՈՒՆ ՈՒՆԵՑԱԾ .

ՊԱՐՏՔԵՐՆԻՍ

ԱՍՏՈՒԾՈՅ վրայ մեր ունեցած պարտքերը զրուցելէն ետեւ , մեր նմաններուն հետ ունեցած պարտքերնիս զրուցենք :

Սենք ընկերական վիճակի մէջ ենք , աս ընկերութեան անդամները՝ ամմէնքնալ ծնած ատեննին՝ ապրելու ու մեծնալու իրաւունքնին ալ հետերնին կրբերեն . ամմէն մէկ անդամին վախճանը՝ նպատակը մի և նոյն է . ամմէնքնալ ան նպատակին հասնելու համար պիտի աշխատին :

Ամմէն մէկ զատ անդամ՝ իրեն իրաւունքները ունի ըսինք , անոնց դպչելու չէ՛ . ահա՛ մարդոց մէկը զմէկու ունեցած պարտքերնին ասկէ կրճագի . աս է անոնց աղբիւրը :

Ի՛նտոր որ առաջ ալ ըսինք , մարդիկ մէկտեղ գալով ընկերութիւն մը ունին , որ մարդկային ընկերութիւն կամ մարդկային ազգ կըսվի . նախ՝ անոր համար պարտքեր ունիս , երկրորդ՝ ան ընկերութեան մէջ եղողներուն ամմէն մէկին զատ զատ :

Ծ Ն Ո Ղ Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի՛ն առաջ մենք ծնողք ունինք . մեր ծնողաց ունեցած պարտքերնիս , առջի զրուցածներէս կրը նանք հանել . թէ որ մեզի կեանք տուողը աստուած

է նէ՛ անիկա մեր ծնողացը ձեռքովը տրվեր է . ա-
նոր համար անոնք մեր կենացը պատճառ ճանչնա-
լու ենք :

Պղտիկութեան ատեննիս ուրիշի օգնականութեա-
նը կարօտած իբէն մենք՝ ծնողքնիս մեզի օգներ են ,
մանաւանդ մայրերնիս , մեզի իրենց կաթովը մեծցու-
ցեր են , մեզ ապէն պաղէն պահեր են :

Մենք մեզի պաշտպանելու բաւական չեղած
ժամանակնիս՝ հայրերնիս մեզի խնամակալ եղեր են ,
մեզի պէտք եղածը հոգացեր են , մեզի կրթեր են ,
մարդու կարգ անցուցեր են , վերջապէս մեզ սիրե-
րեն ու միշտ կր սիրեն , միշտ մեր բարերարն են ե-
ղած . անանկ որ աստուծմէ ետքը՝ ունեցած պարտ-
քերնիս մեր ծնողացն է :

Միշտ անոնք մեզմէ մեծ տէյի ճանչնալու ենք .
թէ որ անոնք՝ մենք պղտիկ իբէն մեզի նայեցան
նէ , մեզի ի՛նչըրտար անհրաժեշտ պարտք մը եղած
կրլայ անոնց ծերութեան ատենը անոնք նայե-
լու . անոնք բնաւ չենք կրնար անպատիւ բռնել :
Իր ծնողացը անհնազանդելէն , մանաւանդ անոնց
դէմ ապստամբելէն մեծ յանցանք չի կայ աշխարհ-
քիս մէջը : Պղտիկ իբէն միշտ միտքերնուս մէջ
պիտի բռնենք թէ՛ մենք որչափ շատ գիտնանք ,
անոնք մեզմէ աւելի բան տեսած ըլլալովնին մեզ-
մէ փորձ են , ատոր համար անոնց հնազանդինք
պիտի , վերջապէս միշտ միտքերնուս մէջ պիտի ը-
լա թէ՛ մեր ծնողքները աստուծոյ կողմանէ՛ մե-
զի երկրորդ նախասնամութիւն մը եղած են :

ՈՐԴԵՍԻՐՈՒԹԻՒՆ

ԲՆՏՈՐ որ ծնողքնիս սիրելը պարտք է նէ . ալ նանկ ալ մարդուն իր զաւակը սիրելը պարտք է . զաւակը սիրելը՝ անանկ բնական բան մը նէ՝ որ մինչեւ անատուններուն քով ալ կայ . քուկին ճընունդները . քեզի աւանդ մըն են , նախախնամութիւնը անոնք քեզի յանձներ է , օր պիտի գայ որ՝ ան աւանդը քեզի պիտի հարցվի : Աշխարհքիս մէջ մէկ զաւակին իրեն ծնողացը ըրած ապերախտութեանէն գէշ պատիժ չի կրնար ըլլալ , տղադ մեծնայ նէ՝ չէ՛ թէ միայն քուկին իրեն ընելիք բարերարութիւններդ երեսդ կրնայ զարնել . չէ՛ թէ միայն մարդկային օրենքները կը պարտաւորեն քեզ անոնք նայելու , հապա անհուն էակին ատեանն ալ ըրա՛ծըդ պիտի քննրվին , հոն ալ պիտի հաշիւ տաս :

Նախախնամութիւնը քեզի զաւակ սիրելը՝ մէկ լոկ պարտք մը տէյի չի դրաւ , հապա ատ սիրոյն մէջ՝ քեզի բարեկամութիւն մըն ալ շնորհեց . մարդըս սիրտ մը ունի , սիրել կուզէ նէ՝ սիրվիլ ալ կուզէ :

Ո՛վ քեզ քու զաւակէդ աւելի կրնայ սիրել , թէ որ դուն ասօր անոնց բարերարը՝ անոնց խնամակարը ըլլաս նէ . ատեն մը կուգայ որ քու քովէդ փախչին երեսդ . նայելու չըլլան նէ՝ անոնք միայն քու քովդ կը կենան , թէ սրտիդ և թէ մարմնոյդ պէտք եղածները անոնք կը լեցընեն :

Օ՛ւաւակ սիրելը , անոնց համար աղէկ եղածը

ընել է , անոնց աղէկութիւնը՝ աս օրվան մէջ եղած
աղէկութիւնը չէ՛ . անոնք ալ քեզի պէս մարդ պի-
տի ըլլան , պէտք է մարդ ըլլալ սորվեցընես անոնց ,
պէտք է որ անոնք կրթես , հոգւոյն մտքին ու մարմ-
նոյն կարողութիւնները դաստիարակես , վերջապէս
ինքը ազատ ընես՝ այսինքն՝ իրեն զինքը ճանչցընես .
ասիս այս է ճնողաց պարտքերը :

ԳՒՍԻԽ Է .

Ե Ղ Բ Ա Յ Բ Ս Ի Բ Ո Ի Թ Ի Ի Ն

ԵՂԲԱՅԲՍԻԲՈՒԹԻՒՆՆԵՍ ալ մարդուս պարտքերուն
մէկն է , ամմէնն ալ մէկ տան մէջ , ամմէնուն ալ
կեդրոնը մէկ , ամմէնն ալ մէկ սեղանը հաց կու-
տեն , ամմէնն ալ մի և նոյն իրաւունքը ունին ի-
րենց ճնողացը խնամակալութեանը վրայ . անանկ
ալ ամմէնը մի և նոյն խնամակալունքը կը սիրեն ,
ամմէնուն նախախնամութիւնը մի և նոյն է , ամմէնքն
ալ մէկ օրինակ , մէկ հայելի ունին առջեւնին . ա-
սոնց ամմէն մէկը սերտ բարեկամութիւն կապելու
մէյ մէկ կապեր չէ՞ն մի . մեր ճնողքէն ետքը՝ մեր
բարեկամները՝ մեր եղբայրներն են , իրար միշտ աս
աչքով նայելու ենք , միշտ մտածելու ենք որ , մէկ
եղբայրը մէկալ եղբօրմէն ո՛չ աւելի է և ո՛չ պակաս :

Թէ որ աս աշխարհքիս մէջ մինակ բան մը չենք
կրնար ընել , ու ուրիշին ձեռնտուութեանը կարօտ
ենք նէ՛ որչափ առաւել ամմէն կերպիւ մեզի մերձա-
ւորներուն օգնութեան հասնելու պիտի հոգ տանինք :

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

ԱՍԱԿ ալ՝ ամուսիններն ալ մէկըմէկ սիրելու են որ միաբանութեամբ կարող ըլլան ժամանել նը պատակներնուն որ նախախնամութիւնը սահմաներ է իրենց . և այս նպատակն է զաւակ սնուցանել , քրիստոսի եկեղեցիին զինուոր հասցնել :

Ուստի մինչեւ որ սիրով միաբանած չըլլան՝ ոչ զաւակներնին կրնան յառաջացունել , և ոչ նպատակներնուն հասնիլ :

Նախախնամութիւնը երկուքին ալ մէյմէկ կերպ կարողութիւն տուաւ որ , մէկին ունեցածը՝ մէկայլ չի կրնար ունենալ . մէկը՝ մէկայլին ըրածը չի կրնար ընել :

Հայրը կրնայ մի ունենալ այն գողտրիկ զգացումը , որ իր տղան խօսիլ չի գիտցած լըէն , իրեն մէկ նշանէն ուզածը հասկընայ . հայրը կրնայ մի մօրը պէս տղին ամէն մէկ դժարութեանը համբերել . հայրը կրնայ մի մօրը պէս զաւկին համար ինքը զինքը մոռնալ , գիշերը ցորեկին խառնել . հայրը կրնայ մի տղին բնաւորութիւնը քաղցրացընել , սիրել սորվեցընել :

Բայց թէ որ նախախնամութիւնը պարտք տէի մօր մը ասոնք դրաւ նէ՝ հօրն ալ ուրիշ պարտքեր դրաւ . մայր մը չի կրնար հօրը ըրածը ընել . տանը պահապանը հայրն է . մէկը տղին պակասութիւնը վտանգը կողայ , մէկայլ ան պակասութիւնները կը

լեցնէ . հայրը տանը կարգն է՝ զինուորն է . հայրը տը
ղին իմացականին պատկերն է , մայրը սրտին . պէտք
է որ երկուքն ալ մէկզմէկու կարողութիւնները գիտ
նան :

« Կանայք հնազանդ լերուք արանց ձերոց » , Ը
սելը՝ ծառայական հնազանդութիւն մը պատուիրել
չէ . հապա տանը կառավարութիւնը միայն երկանը
ձեռքը պիտի ըլլա ըսել է , որովհետեւ իր ու բոլոր
տանը գլուխ է :

Ուստի թէ որ երկուքին նպատակը միևնոյն է նէ՝
իրար սիրելը մեջերնին հարկ կրլայ , չէ՛ թէ միայն ի
րենց խաղաղութեանը համար , հապա՝ զաւկրներնուն
գէշ օրինակ չըլլալու համար . թէ որ իրենք առաքի
նութիւնը հերքելու ըլլան նէ՝ զաւկներնուն ի՛նչպէս
կրնան անիկա սիրելու խրատները տալ , ու անոնց
աղդել :

Մուսնութեան նպատակը զաւակ հասցունել է
ըսինք . բայց թէ որ աստուած զաւակ չի տայ նէ , ա
մուսինները մէկզմէկ սիրելու պարտք չունին մի . թէ
որ աս կողմէն աստուած անոնք զրկեց նէ՝ երկու
քին ալ զրկում է . ասոր համար երկուքն ալ պէտք է
որ , իրար միխթարեն , զերէ երկուքին ալ նասիլը , ել
լելը , ապիլը , հարստանալը , աղքատանալը , միևնոյն
է , մէկ տեղ է , երկուքնին մէկ են . անանկ որ՝ իրա
րու իրէնցմէն ելել հաւատարիմ ու անմեկնելի բա
րեկամ չի կրնար ըլլալ :

Մուսնութիւնը մէկ միջոց մըն է , որով մեր ան
կատար վիճակին պակասութիւնները կը թեթեւցու
նենք , դառնութիւնները կը քաղցրացունենք :

ՏԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՍՈՆՑՄԷ զատ՝ ծառաներուն ու տերերուն մէջ ալ մէկըմէկու պարտքեր կան : Օտառայները իրենց ծընողացը ինչ աչքով կը նային նէ՛ ան աչօքը պիտի նային տերերնուն , զաւակ մը իր հօրը ընտոր որ կը ծառայէ նէ՛ անանկ ալ ծառան իր տիրոջը ծառայելու է :

Տէրդ ամմէն բան քեզի հաւատաց , քեզի յանձնեց , իր սեղանը քեզի բացաւ նէ , դուն ալ անիկա քեզի բարերար պիտի ճանչնաս , անոր գէշութիւն ընելը , գիտցիր որ ծնողացդ գէշութիւն ընելու հետ բոլորովին մէկ է :

Անոնց հիչ մէկ գործը քեզի ծանրութիւն չի պիտի սեպէս , և հիչ մէկ հրամանը ականջի ետեւ ձրգելով անհնազանդութիւն չի պիտի ընես , վասն զի առաքելոյն՝ « Օտառայք հնազանդ լերո՛ւք տերանց ձերոց » , ըսելը՝ աս միտքովն է , անոնց հնազանդելը՝ ծընողաց հնազանդելու պէս է :

Ասանկ ալ տերերը իրենց ծառայները՝ զաւկի աչքով նայելու են , թէ որ բաղդը անոնք զրկեր է նէ՛ նայելու է որ անոնց վիճակին մխիթարիչ ըլլան , ու տրանջարու պատճառ մը չի տան :

Ամենքս ալ մարդ ենք , թէ որ հոս ամմէնքս մէկ մէկ վիճակի մէջ ենք նէ , տեղ մը կայ՝ որ ամմէնքնիս ալ մէկ պիտի ըլլանք , աստուծոյ առջին ամմէնքս ալ մէկ ենք :

Բ Ա Ր Ե Կ Ա Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ս'ե՛ր հաւասարներուն հետ ալ ուրիշ պարտքեր ունինք . եղբայրնիս ինտոր որ կը սիրենք նէ՛ անոնք ալ անանկ սիրելու ենք . « Ի՛նչ որ ուրիշներուն քեզի չընել նին կուղես նէ՛ դուն ալ անոնց մի՛ ըներ . ի՛նչ որ կուղես որ քեզի ընեն՛ դուն ալ ուրիշներուն ըրէ » :

Ս'անաւանդ՝ մեզի բարեկամ եղողներուն հետ՝ պէ՛տք է որ բնաւ կեղծիւք բան մը չընենք , մեզի ազէ կութիւն ընողներուն՝ աղէկութիւն ուզենք , անոնց երախտիքը ճանչնանք . մէկը մեզի դէմ յանցանք մը ընէ նէ՛ ներե՛նք :

Ա՛րարիչ մը ունենալնիս պէ՛տք է որ միշտ միտքերդ նուս մէջ ունենանք , անոր առջին մենք միշտ պակասութիւն կընենք , անիկա մեզի կը ներէ . արեւը գէշին վրայ ալ կը ծագէ , բարիին ալ . աստուծոյ նմանելու պիտի ջանանք նէ՛ ներել ալ գիտնանք պիտի . ձեռքէդ բարերարութիւն մը գայ նէ՛ ան ալ ըրէ . թշնամիիդ վրայ ընելիք է՛ն մեծ յաղթութիւնդ՝ անիկա իր թրշնամութենէն ետ կեցնելն է . թշնամիիդ դէմ բարերարութիւն ընելէն ուրիշ մեծ գէնք չես կրնար ունենալ :

Ի՛արեկամ եղեր , թշնամի եղեր , բարեկամութիւնդ մի՛ ինայեր . մարմնաւոր մէկ հեշտութիւն մը դեռ չի լրմընցուցած կէսն իքէն ձանձրանալ մը կուգայ . բարոյական հեշտութիւնները անանկ չեն :

Հարցու՛ր բարերարին մէկին , աղքատի մը մերկ

տղայքները , սրտէն տաքէն պահած ու անոնց արցունք
 քը սրբած ժամանակը , ինչ հեշտութիւն խնցաւ , ու
 ան զգացած հեշտութիւնը ուրիշներուն պէս շուտով
 անցաւ մի : Վերջապէս՝ ուրիշն ունեցածին աչք մի
 տնկեր , մի դպչիւր , ուրիշի անունը մի աւերեր . և վերջ
 ջապէս՝ “ Ինչ որ կուղես , քի մարդիկ քեզի չենեն , դուն
 ալ անոնց մի ըներ ” :



ԳՂՈՒԻ ԹՎ .

ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՍԱՐԴՍ՝ որ ժողովուրդի կամ որ ազգի մէջ ծնած է նէ , ան ազգին շատ պարտականութիւններ ունի :

Նախախնամութիւնը մարդս տկար տեղծեց , ու իրեն անբաւ կարիք տրվաւ , ասոր համար ընկերաւ կան վիճակը իրեն պարտք է :

Սարդիկ մէկ տեղ ժողոված են , մէկ տեղ կաշխատին , մէկ տեղ իրենց նպատակին հասնելու կը ջանան . իրենց աս ընկերութիւնը կամ ժողովը՝ հաստատ պահելու համար , կանոններ՝ օրէնքներ ունին . ան օրէնքները զանց ընողներուն ալ պատիժ տալու կարողութիւն մը ունին կամ ո՛վ որ դիւրեկը իրենց նպատակէն ետ կեցնել ուղէ նէ , անոր դէմ դնել , անիկա պատժել՝ դաշինք են ըլլեր մէջերնին : Արեմն ամ մէջս ալ պարտական ենք՝ որ նախ մեր ազգին սղկուցութիւնը մոմտանք , ու անիկա իր նպատակին հասցընելու ջանանք . աս պարտքը ամմէնուս ալ է , հիչ մէկերնիս անկէ ազատ չենք :

Ի նտոր որ ծնողքնիս մեզի խնամակալու եղան , ու առանց անոնց օգնականութեանը՝ կեանքերնիս չէինք կրնար վայելել , անանկ ալ ազգերնիս մեզ իր թեւին տակը պահպանած է ու կը պահպանէ . ուստի անոր աղէկութիւնը պիտի ուղենք , ու անիկա պիտի սիրենք :

Երկրորդ՝ ամմէնքս ալ անոր պաշտպանը պիտի ըլլանք , դէրէ անիկա պաշտպանելը մեզ պաշտպանել է . անոր նպատակը մերն է , ազգը՝ ինտոր որ քու կեանքը պաշտպաներ է նէ՝ պէտք եղած ժամանակն ալ քու կեանքդ անոր պիտի նուիրես , դէմ դնես , կամ խելքդ բանեցընելով՝ աղէկ խրատներ տալով , կամ ինչ և իցէ կերպիւ անոր աղէկութեանը վնաս տուող բաները հեռացընելով :

Ենոր օրէնքներուն պիտի հպատակիս , անոր կառավարութեանը դէմ չի պիտի գաս , միշտ թիւննելով սրտորութիւն չի ձգես մէջը , աղէկութեանը արգելք չի պիտի ըլլաս : Ես պակասութիւնները չի պատահելու համար՝ կամ պատահածը խափանելու համար , ազգը պաշտպաններ կրնարէ , ոմանք օրէնսդիր կրնէ , ոմանք դատաւոր , ոմանք ուսուցիչ , պէտք է որ հետեւիս աննց կամէն . “ Օ ի այրպէս են կամք աստուծոյ , բարեգործացն պապանձեցուցանել զանրդ , դամ մարդոց զանոյ խտութիւն ” :

Երրասէր ըսկելու համար , միայն ազգին դէշտութիւն չընելը չօգտէր , պէտք է որ անոր աղէկութեանն ալ ջանաս . թէ որ ձեռքերդ կապէս նստիս նէ՝ տան մը մէջ չաշխատելով , ու իշի հացը ուտողը կրնմանիս , կամ ծնողդ բարեկամդ խղճութեան մէջ տեսնելով՝ ձեռքէն օգնութիւն գալ տէ՝ չընողի կրնմանիս :

Եզգին հոգերուն՝ ազգին բարութեանը ու յա

ուշադիմութեանը վերաբերեալ բաներուն՝ տահա առաւել աչքդ ու ականջդ պիտի բանաս . զերէ մէկը խեղճ տեսնել ու անոր օգնութիւն չընելը՝ միայն անոր կը դպչի . բայց քուկին անխիղճ պրտըտելդ՝ բոլոր ազգին կը դպչի :

Օւրբցածդ չէ՛ն ըներ ըսելով՝ ազգին օգտակար բաներէն ետ կենալու իրաւունք չունիս . հայրդ կամ մայրդ՝ հիւանդ խեղճ վիճակի մը մէջ տեսած ատենըդ , իրեն դեղ ընել ուղես տէ՛ ու ինքը չուզեր նէ՛ ետ կը կենաս մի՛ . կերթաս ճամբան կը փնտրուես , կը զրուցես , համոզելու կը ջանաս . ահա՛ ազգիդ համար ալ ատանկ պիտի ընես : Անոր համար նեղութիւններէ վիշտէ ետ փախչելու չէ՛ , պարտքդ վճարելու համար . յիսուսի դատապարտվիլը՝ խաչվիլը՝ մարդասիրութեան համար էր , անոր չարչարանքները մեզի դաս են , անոր նմանելու ենք :

Աղբը չի սիրող մարդը աշխարհքիս մէջ բան մըն ալ չի կրնար սիրեր . անանկ մարդ միայն ինք զինքը գիտէ . միայն իր վրայ կը խորհի , ուրիշ բան մը չի մտմտար . անանկը ո՛չ բարեկամ կրնայ ունենալ , ո՛չ առաքինութիւն կրնայ ընել . անանկը աս աշխարհքիս մէջ վատ անուն , անդ իի աշխարհքն ալ ապերախտներուն դասը պիտի գրվի :

Աշխարհքիս մէջ իր ազգին ապերախտութիւն ընելէն մեծ յանցանք չի կայ . շատերը իրենց արիւնը թափած են ազգերնուն համար . շատերը կեանքերնին ծախսերեն ազգին լաւութեանը համար . և թէպէտ ազգերուն վնաս տրուող մարդիկ ալ ծներ ու մեռեր են . բայց երկուքին ալ յիշատակութիւնը տարբեր է , մէկը անէծքով կը յիշվի , մէկալը օրհնութեամբ , և բարի օրինակ ըսվելով :

ՅԱԼԱԳՍ ԱՆՁՆԱԿ ՊԱՐՏՈՒՑ

Կը մնայ հիմայ , մեր մեզի ունեցած պարտքերնիս զրուցել : Աստուած մեզի ստեղծեց նէ , մեզի նպատակ մըն ալ ցուցուց , ա՛տ նպատակին հասնելու համար կարողութիւններ տրվաւ . պէ՛տք է որ հիմայ ան կարողութիւնները ի՛նչ կարգաւ գործածելը սորվինք :

Նախ՝ հոգիին կարողութիւնները կան , որ գլխաւորապէս զգալը՝ իմանալը , կամելն է : Պէ՛տք է որ մեր կամքը՝ մեր կամելը ազատ մնայ . արարիչը մեր կամքը մեզի ազատ տուաւ , որ անով աղէկ բաներ ընենք , գէշ բանեն փախչինք . պէ՛տք է որ կամքերնիս աշխարհի բաղձանացը՝ ու մարմնական հեշտութիւններուն գերի չընենք . մեր կամքին միայն մեր իմացականութիւնը կիշխէ , ատոր համար իմացականութիւննիս ալ պէ՛տք է որ՝ միշտ իր պաշտօնը սորվելու ետեւէ ըլլա , ու իր նպատակը բնաւ չի մոռնայ :

Իր նպատակին հասնելու համար , թէ աստուծոյ թէ իրեն նմաններուն ունեցած պարտքերը մոմտա , այսինքն՝ միշտ ճշմարտութիւն փնտրուէ ու սխալէն փախչի :

Ատ ճշմարտութիւնները ճանչնալու համար , բը նական ու գերբնական բաներու վրայ հմտութիւն ունենալու է , որով ի՛նչ որ ըսեն նէ իրեն , քննէ՛ նայի . գէրէ ինքը իրմէն պիտի հարցրվի : Ասանկ ալ մեր ըզգացողական զօրութիւնը պէ՛տք է որ կըթենք . զգայաբանքներնիս մեր մարմնոյն պէ՛տք եղածները մեզի կը

ծանուցանեն , իմացականութիւննիս անոնց ամմէնը
կըւելու է . պէտք է որ զգայարանքներնուս անխոր
հուրդ բաղձանքներուն դէմ կենայ :

Երկրորդ՝ մեր մարմնական պարտքերը գիտնալու
ենք , գլխաւորապէս մեր կեանքին ու մարմնոյն ազա
տութիւնը պահել պահպանելը՝ մեզի պարտք է , չընե
լը մեծ յանցանք է : Սարմինը՝ մեր նպատակին հասնե
լու համար մեզի միջոց մը տէչի տրվեցաւ . անիկա մե
զի աւանդ մըն է , անոր ի՛նչպէս կրնանք դպչել . Թէ
որ արարչին սահմանած ատենին չսպասելով՝ մեր հո
գին մարմիննուս զատելու ըլլանք նէ , նախ՝ աստուծոյ
անհնադանդութիւն բրած ըլլալով , արարչագործու
թեան նպատակէն հեռացած կրլանք . երկրորդ՝ մենք
ընկերական վիճակի մէջ ենք , ծնողք՝ բարեկամ ու
նինք , մեր ունեցածը միայն մերը չէ՛ , մերիններունն
ալ է . մարդկային բոլոր ազգին մեր նպատար և կեան
քը պարտաւոր ենք . բայց կարելի է , կրեսս որ հիշ
մէկ բանի մը օգուտ մը չունիմ , բոլորովին անպիտան
մէկ մի եմ՝

Բայց քեզի հարցունեմ , ինչպէս կրնաս գիտնալ
ատիկա , որովհետեւ վաղը՝ վայրկեան մը ետքը ընելի
քրդ չգիտես . ինչպէս կրնաս գիտնալ վաղը՝ մէկալ օր՝
կամ ատենէ մը ետքը դուն մէկուն լաւութեանը պատ
ճառ չի պիտի ըլլաս . նմանապէս կրնաս մի գիտնալ
ինքզինքդ մեռցրնելով հիշ մէկու մը գէշութեան
պատճառ չըլլալ :

Թէ որ մենք մեզի մեռցրնենք նէ , մեզ սիրողնե
րուն տրտմութեան ու սուգին պատճառ չենք մի ըլ
լար . Թէ որ աստուծոյ կամքը ինծի կապրեցունէ , կրու
նամ մի ինծմէ իր աւանդը չուզած բռնել երեսը նե
տել . և ասանկ ընելով իմ նպատակէս հեռացած չեմ՝

մի ըլլար . քեզի տուած աւանդս ի՞նչ ըրիր տէյի ինձի չի՞ պիտի մի հարցըլի :

Մարմիննիս՝ միայն մեր կամօքը յայտնի կերպով սպաննելնիս չի՛ , հապա որկրամուլութեամբ ու անբարեխառնութեամբ ալ անոր մահուանը պատճառ կրը նանք ըլլալ , սա ալ առջինին պէս մե՛ղք է :

Ի՛այց՝ դիտաւորութիւնս ան չէ՛ր պիտի ըսես , դու կոյր չի՛ս , բայց աչքդ՝ տէ՛ս որ ըրածներդ մահուանը պատճառ կրըլան :

Մարմինը՝ հոգիին պաշտօնեան է պէտք է որ անոր նայիս՝ որ հոգւոյն ալէկ ծառայէ , անիկա ամմէն վրտանգներէն պահելու ենք , որ ատենին ինչ աղէկութիւն կամիս նէ՛ կարողութիւն ունենայ կատարելու :

Ուրեմն բնաւ մեզի հրաման չի կայ , որ մարմիննիս մեռցրնենք , կամ անոր մեռնելուն պատճառ ըլլանք . ու միայն երբոր ալէկութիւն մը ընելու , կամ գէշութեան մը դէմ դնելու հարկ մը ըլլա նէ՛ կեանքերնիս ան ատենը միայն վտանգի մէջ կրնանք դնել :

Մեր մարմնոյն ազատութիւնն ալ վերիններուն պէս մեզի պարտք մըն է . մարդս ծնած ժամանակը՝ կեանքին հետ կամք մըն ալ կունենայ . կամքը ազատ է՝ մարմինը որ անոր պիտի ծառայէ , պէտք է որ ան ալ ազատ ըլլա , անմիտ կրից , և ունայն յօժարութիւն ներու ծառայ չըլլա :

